կիր վրին մեծ առնէին եւ ի մեռելոցն զուբն եւ սասն պատեալ կտաւով դնէին ի վիճն եւ հողով ծածկէին»:

Երկրաշարժը տեւած է ութ օր անդադար, այնպէս որ «ոչ կարէին ի տունս բնակիլ, այլ ի բացեայ վայրի վրանով կային»։ *Յետոյ՝ պարբերական ընդհատումներով մինչեւ Յունիս շարունակուած է,*

Դաւրիժեցի կը խօսի նաեւ վանքերուն վրայ եւ կ'ըսէ, թէ «վերին Վարագ եւ ներքին Վարագ եւ եկեղեցի սրբոյ հօրն Թոդկայ, եւ մեծ եկեղեցին Սալնապատայ վանից, Շուշանից վանքն, Դուռնուպատայ վանքըն, Խէքուց վանքն, Լերեմերայ վանքն, Սրխու վանքըն, Բերդակու վանքն, Կենդանանից վանքն, Կորնկու վանքն, Անգուսներու վանքն, Ալերու վանքն, Արջակու վանքն» *ամէնքն ալ* «փլուզեալք աւերեցան» :

Նշանակելի է, որ այս վանքերէն միայն «Երկու Վարագ եւ Կոնկու վանքն, եւ Խէքուց վանքն միայն շինեցան. իսկ այլքն մնացին աւերակ»

Նոյնպէս Վանայ շրջակայ գիւղերու բոլոր շէնքերը եւ եկեղեցիները միասին փլան։ Բազմաթիւ աղբիւրներ ցամքեցան, ջրանցքներ քայքայուեցան եւ ն.։

Այս զարհուրելի երկրաշարժը, որուն մասին շատ մանրամասն կը խօսի Առաքել Դաւրիժեցի, նկարագրուած է կարճ տողերով նաեւ Գրիգոր Դպիր Վարագեցիէ (Դիւան Հայոց Պատմութեան. *Ժ. հտ. էջ* 62-63) *եւ* Անցք Վասպուրական աշխարհի *խորագրով տեղացի անանուն հեղինակէն (նոյն. Ժ. հտ. էջ* 104) *եւ վերջապէս ժամանակագիր Յարութիւն Խալֆայեանի գործին մէջ (նոյն. Ժ. հտ. էջ* 124)։

Այս մեծ աղէտը, ըստ Դաւրիժեցիի, «Վանայ քաղաքի փառայն, եւ այլ իշխանքն...գրով շարագրեալ